ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 476
« 24 » օգոստոսի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

պարոն Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. օգոստոսի 24-ի թիվ 73-Ա որոշումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կատ. Ա. Մարտիրոսյան
հեռ. 094-34-70-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » օգոստոսի 2018թ. № 73-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԻ 06-056-0010-0003 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Վասիլի Խաչատրյանի դիմումը, N056640 հողի սեփականության իրավունքի պետական ակտը, համայնքապետարանի կողմից տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.03.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ 510-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

որոշում եմ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0010-0003 ծածկագրում գտնվող 0.11765 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0010-0003 ծածկագրում գտնվող հողամասի մակերեսը՝ 0.11765 հա

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 0.11765 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով, վերահատկացնել Գոհար Վասիլի Խաչատրյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0010-0003 ծածկագրում գտնվող 0.11765 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 45.65 ք.մ մակերեսով բնակելի տան, 13.46 ք.մ մակերեսով բաց պատշգամբի, 27.01ք.մ մակերեսով գոմի, 9.71ք.մ մակերեսով ծածկի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Գոհար Վասիլի Խաչատրյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել 06-056-0010-0003 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, փողոց 5, տուն 4:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

կ.տ

2018թ. օգոստոսի 24
գ. Լոռի Բերդ